Հավելված 1

ՀՀ Նախագահի
2018թ. փետրվարի 17-ի
ՆՀ- 103 -Ա հրամանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ 2018-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ժամանակակից աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանային մարտահրավերները շարունակում են պահպանել Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացմանը խոչընդոտող անմիջական և հավանական սպառնալիքները, որոնց չեզոքացումը սկզբունքային նոր մոտեցումներ ու ռեսուրսներ է պահանջում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունները ենթադրում են պետության պաշտպանության կազմակերպման, զինված ուժերի ղեկավարման, պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողության, ինչպես նաև բանակ-հասարակություն հարաբերությունների նոր ընթացակարգեր:

Գիտության և տեխնիկայի նվաճումները, ավանդական խոցման միջոցներին զուգահեռ՝ ասպարեզ են հանում նոր սերնդի պատերազմավարման գործիքարան, ինչը պահանջում է վերանայել ռազմական գործողությունների բնույթը, օպերատիվ արվեստը և մարտավարությունը: Մասնավորապես, սպառազինության և ռազմական տեխնիկայի, ռազմական տեխնոլոգիաների մատչելիությամբ պայմանավորված՝ դրանց ճշգրտության և հզորության միաժամանակյա բարձրացումը, նոր տեսակի զենքերի ներդրումը բերել են զինված պայքարի ձևերի և եղանակների, հետևաբար նաև՝ պատերազմի բնույթի փոփոխման. պատերազմը դարձել է ավելի սրընթաց ու կարճատև, խնդիրների շոշափելի մասը կատարվում է օդատիեզերական տիրույթում գործող ուժերով ու միջոցներով, էականորեն նվազում են ցերեկային ու գիշերային պայմաններում մարտ վարելու տարբերությունները, ավիացիայի հնարավորությունները թույլ են տալիս նպատակակետերը խոցել առանց ՀՕՊ խոցման գոտի մտնելու, հետախուզական հնարավորությունների ավելացումը թույլ է տալիս տարածքի ամբողջ խորությամբ ապահովել մանրակրկիտ

հետախուզություն, առաջին պլան է մղվում տեղեկատվական պայքարը, լայնորեն կիրառվում են հատուկ օպերացիաների ուժերը: Հեշտացել է պաշտպանության ճեղքումը, զորամասերի և ստորաբաժանումների միջև մարտավարական փոխկապվածության կորուստը, ղեկավարման խաթարումը կամ խափանումը, հատկապես՝ գումարտակ, վաշտ օղակներում: Նման պայմաններում օպերացիան համաձայնեցված ու կապակցված մարտական գործողությունների, ճակատամարտերի, մարտերի, հարվածների և զորաշարժի ամբողջությունից կարող է անկառավարելի բնույթ ստանալ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024թթ. արդիականացման ծրագրի (այսուհետ՝ Արդիականացման ծրագիր) մշակման ընթացքում առաջնահերթ ուշադրություն է դարձվել ռազմաքաղաքական և ռազմական բնույթի սպառնալիքներին: Հաշվի են առնվել ներկայումս առկա դրանց հավանականությունը, փոփոխության միտումները, նախազգուշացման և նախապատրաստման ժամանակը, ՀՀ կենսական շահերի վրա ազդեցությունը և սպառնալիքների վրա ազդելու ՀՀ հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի վերոնշյալ առանձնահատկություններից բխող ռազմական սպառնալիքների բնույթը, պաշտպանության վրա ազդող քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական, հասարակական, մշակութային և մյուս բոլոր գործոններն ու գործընթացները ձևավորում են ոչ միայն զինված ուժերի խնդիրը՝ դրանց դիմագրավման և չեզոքացման առումով, այլև անմիջական ազդեցություն են գործում պաշտպանական կարողությունների զարգացման միտումների վրա:

Արդիականացման ծրագրի նպատակն է սահմանել այն հիմնական ուղենիշերը, երկարատև պլանավորման խնդիրներն ու ռեսուրսները, որոնք հիմք են հանդիսանալու ՀՀ պաշտպանության բնագավառի, մասնավորապես՝ զինված ուժերի կառուցվածքային ու բովանդակային վերափոխման և կիրառման, կառավարման համակարգերի զարգացման, սպառազինության ու ռազմական տեխնիկայի նորացման, գիտատեխնիկական ներուժի արդյունավետ կիրառման և այդ ամենով հանդերձ՝ ամուր ու հուսալի պաշտպանունակության ապահովման համար:

Արդիականացման ծրագիրը նպատակ ունի հասնելու ժամանակակից ռազմարվեստի ու անվտանգային միջավայրի պահանջները բավարարող մի մակարդակի, որտեղ ՀՀ զինված ուժերը պետք է.

ա) համապատասխանեն ռազմական անվտանգության ապահովման և պատերազմի վարման փոփոխվող պահանջներին, ի զորու լինեն կանխատեսելու, կանխելու, զսպելու, հակադարձելու կամ չեզոքացնելու առկա ու հավանական ռազմական բնույթի

սպառնալիքներն ու մարտահրավերները, դրանց իրականացման համար ունենան բավարար մարտունակություն, ներառյալ՝ ուժեր և միջոցներ,

բ) իրենց խնդիրների կատարմանը հասնեն ռեսուրսների առավել արդյունավետ պլանավորմամբ և նպատակային իրացմամբ՝ հասանելի ռեսուրսների շրջանակում հնարավորինս մեծ ռազմական արդյունավետությամբ ապահովելով Հայաստանի Հանրապետության պաշտպանունակությունը, բնակչության անվտանգությունը, սահմանների անձեռնմխելիությունը և տարածքային ամբողջականությունը և երաշխավորելով Արցախի Հանրապետության անվտանգությունը:

Արդիականացման ծրագրի՝ զինված ուժերի զարգացման ու կարողությունների ավելացման առաջնահերթ նպատակային խնդիրներից է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համատեքստում Ադրբեջանի հետ զինված դիմակայությանը և դրա՝ լայնածավալ ռազմական գործողությունների վերաճելու հավանական սցենարներին հակազդումը: Որպես անմիջական ռազմական սպառնալիք՝ համակողմանիորեն գնահատվել են Ադրբեջանի Հանրապետության հետ ռազմական դիմակայության, դրա հնարավոր էսկալացիայի, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, տեղեկատվական, կոմունիկացիոն և մյուս հիմնական հարթություններում ձևավորվող իրողություններն ու հնարավորությունները, առաջադրվել են հուսալի պաշտպանության ժամանակակից և արդյունավետ լուծումներ:

Արդիականացման ծրագիրը հանդիսանում է ռազմավարական բնույթի ուղեցույց փաստաթուղթ՝ ապահովելով երկարաժամկետ ուղենիշեր միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրային փաստաթղթերի մշակման համար: Այն հիմնված է ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի հիմնական հասկացությունների վրա:

Արդիականացման ծրագիրը ենթակա է ճշգրտումների և փոփոխությունների՝ ըստ ՀՀ արտաքին քաղաքական իրադրության, անվտանգության միջավայրի և սպառնալիքների բնույթի փոփոխության, պաշտպանության հերթական ռազմավարական վերանայման արդյունքների, ինչպես նաև սույն փաստաթղթում նշված նպատակների:

Արդիականացման ծրագիրը ենթադրում է մի շարք ոլորտային առանձին ծրագրերի և ռազմավարությունների մշակում, գիտահետազոտական աշխատանքների և պիլոտային ծրագրերի իրականացում:

II. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի առանձնահատկություններից և ռազմական սպառնալիքների բնույթից ելնելով՝ 2018-2024թթ. համար կանխատեսելի է, որ.

- Միջազգային հարաբերություններում կշարունակվի համագործակցային մթնոլորտի թուլացման միտումը, կպահպանվեն ռազմաքաղաքական հակասությունները անվտանգության տարբեր կազմակերպությունների և պետությունների միջև, հարաբերություններում կոնֆլիկտայնության աստիճանը չի նվազի, ինչը կարող է հանգեցնել Հայաստանի անվտանգային միջավայրի վրա բացասաբար ազդող անկայունության նոր օջախների և ոլորտների ձևավորմանը:
- Հարավկովկասյան տարածաշրջանում և նրա շուրջ ռազմաքաղաքական իրավիճակը կշարունակի բնութագրվել չկարգավորված հակամարտությունների առկայությամբ և տարածաշրջանի պետությունների անվտանգության ապահովման վերաբերյալ տարբեր պատկերացումներով, կշարունակվեն արդիական մնալ միջազգային ահաբեկչության և այլ արտաքին վտանգները, կպահպանվեն տարածաշրջանային անհանդուրժողականության մթնոլորտը, տարածաշրջանի պետությունների՝ միմյանցից տարբեր անվտանգային կառույցներին ինտեգրման գործընթացները և դրանով պայմանավորված՝ ռազմաքաղաքական հակասությունները:
- Չնայած Հայաստանի Հանրապետությունը կշարունակի ԼՂ հակամարտությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահների միջնորդությամբ և խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու քաղաքականությունը, հակամարտության վերջնական կարգավորման հավանականությունը ցածր է՝ հաշվի առնելով Ադրբեջանի քաղաքական ղեկավարության առավելապաշտական մոտեցումները: Մասնավորապես, Ադրբեջանի Հանրապետությունը կշարունակի ռազմականացման ու սպառազինությունների մրցավազք հրահրելու և «Ակտիվ սահմանի» քաղաքականությունը՝ մշտապես բարձր պահելով հայ-ադրբեջանական պետական սահմանին և արցախա-ադրբեջանական ուժերի շփման գծում լարվածությունը, ձեռք բերելով հարձակողական բնույթի նոր, բարձր տեխնոլոգիական զինատեսակներ, իրականացնելով ռազմական գործողությունների վերսկսման տեղեկատվական և քարոզչական նախապատրաստում:
- Ադրբեջանի Հանրապետությունում ներքաղաքական հնարավոր լարվածությունները, ինչպես նաև սոցիալական ընդվզումները, ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտների բացակայության պայմաններում, հասարակության ուշադրությունը շեղելու նպատակով ևս կարող են պատճառ հանդիսանալ ԼՂ հակամարտության գոտում ռազմական գործողությունների վերսկսման համար:

- Իրավիճակի լարումը սադրելու ներուժ ունեն նաև տարածաշրջանում ապակառուցողական շահեր հետապնդող որոշ դերակատարներ: Այդ առումով լրացուցիչ վտանգ կարող է ներկայացնել ահաբեկչական խմբերի ակտիվացումը:

Հաշվի առնելով սույն իրողությունները և դրանց զարգացման միտումները՝ 2018-2024թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը.

- կշարունակի պահել և զարգացնել իր հասանելի ռեսուրսների համեմատ մեծաթիվ, խառը (զորակոչային և պայմանագրային) համալրմամբ զինված ուժեր՝ հասանելի ռեսուրսների շրջանակում զինված ուժերի մարտունակության բարձրացմամբ, սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիական միջոցների կիրառմամբ հնարավորինս մեծ ռազմական արդյունավետության միջոցով ապահովելով ՀՀ պաշտպանունակության ցանկալի մակարդակը,

- կզարգացնի հավաքական պաշտպանության գործուն մեխանիզմներ և ակտիվորեն կներգրավվի անվտանգության ապահովման միջազգային ջանքերին՝ իր արտաքին քաղաքական շահերին և առաջնահերթություններին համապատասխան,

- կընդլայնի ռազմավարական դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ և ՀԱՊԿ շրջանակներում՝ այն դիտելով որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչ և շահագրգիռ մասնակցություն ունենալով ՀԱՊԿ-ի հետագա ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններին,

- կզարգացնի անվտանգության ոլորտում գործընկերային հարաբերությունները ԱՄՆ-ի, Չինաստանի, եվրոպական և այլ երկրների հետ, ինչպես նաև ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և մյուս միջազգային կազմակերպությունների շրջանակներում,

- կշարունակի գործընկեր հարևան երկրների հետ հավասարակշռված բարիդրացիական հարաբերությունների զարգացման քաղաքականությունը, ներառյալ՝ տարանցման ուղիների բազմազանեցման, դրանց անխափան գործունեության ուղղությամբ: Հաշվի առնելով Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների բացակայությունը՝ տրանսպորտային ուղիների շրջափակումը կպահպանվի,

- որպես համագործակցային անվտանգության և ԼՂ հակամարտությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահների ձևաչափով խաղաղ բանակցային ճանապարհով լուծելու ջատագով՝ տարածաշրջանում համագործակցային և գործընկերային մթնոլորտ ձևավորելու նպատակով հետամուտ կլինի անվտանգության և վստահության ամրապնդման միջոցառումների իրականացմանը, տարածաշրջանային տնտեսական, տրանսպորտային և էներգետիկ նախաձեռնությունների ներառականության ապահովմանը,

- կզարգացնի նոր տեխնոլոգիաների վրա հիմնված գիտատար տնտեսական ճյուղեր և պաշտպանական ծախսերին կհատկացնի ՀՆԱ-ի ոչ պակաս, քան 4%-ը,

- առաջընթաց կունենա ժողովրդավարական բարեփոխումների ուղղությամբ, կբարելավի սոցիալական և ժողովրդագրական իրավիճակը,

- միջոցներ կձեռնարկի զինված ուժերում ծառայության տեսակների ընդլայնման, զինվորական ծառայության նկատմամբ սոցիալական ու մասնագիտական գրավչության, կոռուպցիայի դեմ պայքարի և հանրային վստահության բարձրացման, կադրային և մասնագիտական առաջխաղացման արդարության սկզբունքների վերարժևորման հարցերում,

- կիրականացնի մարտական պատրաստականության հետևողական բարձրացման, ռազմական կրթության և գիտության արդյունավետ ներուժի ձևավորման, ժամանակակից տեխնիկայի ու սպառազինության տեսակների արհեստավարժ կիրառմանն ուղղված նպատակային քաղաքականություն:

III. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ ԱԶԳ-ԲԱՆԱԿ

Զինված ուժերի արդիականացումը և ազգային հավաքական ներուժի արդյունավետ կիրառումը կոչված են բարձրացնելու Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և ազգային անվտանգության մակարդակը, երաշխավորելու Արցախի և նրա ժողովրդի անվտանգությունը: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը պետք է ունակ լինեն ռազմաքաղաքական և ռազմական գործիքակազմով զսպելու լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքները և պատրաստ լինեն իրավիճակի ցանկացած զարգացման՝ գործի դնելով իրենց տրամադրության տակ գտնվող **ռազմաքաղաքական** ռեսուրսը, **արդիականացված** զինանոցը և զորքերի **կատարելագործված** մարտական վարպետությունը:

Արդիականացման գործընթացում պաշտպանության նախարարությունը պետք է առաջնորդվի ոչ միայն պետության և հասարակության կողմից պաշտպանության համար հատկացվող մարդկային, տնտեսական, քաղաքական և այլ կարգի ռեսուրսի առավել արդյունավետ օգտագործման, այլև դրա արդյունքում պետական ու հասարակական կենսագործունեության համար «հավելյալ արժեքի» ստեղծման սկզբունքով:

Արդիականացման գործընթացը պետք է թիրախավորի նաև զինվորական մշակույթի և բանակաշինության նոր հիմքերի ձևավորումը, որոնք ոչ միայն արդիականացման ժամանակաշրջանում, այլև հետագա տասնամյակներին զինված ուժերի շարունակական զարգացման և փոփոխվող իրողություններին ադապտացման բավարար ճկունություն կապահովեն:

Արդիականացման գործընթացը չի հիմնվում հավանական հակառակորդի հետ ուժերի զուտ քանակական համեմատությունների վրա և նպատակադրվում է առանց

սպառազինությունների մրցավազքի մեջ մտնելու հասնել ուժերի որակական գերազանցության: Այդ նպատակով բանակի արդիականացման հիմքում դրվել են համապարփակ լուծումներ:

Արդիականացման հիմքում ընկած «Ազգ-բանակ» հայեցակարգի հիմնասյուներն են.

– **Առաջնորդությունը.** հայոց բանակը պետք է դառնա առաջնորդների դարբնոց, այստեղ ձեռք բերվող գիտելիքները, ձևավորվող հմտությունները, պատասխանատվություն ստանձնելու ունակությունը, անցած մարտական ուղու համար հպարտությունը պետք է ամենատարբեր ոլորտներում որոշումների նախապատրաստման և կայացման հարցում վստահ և համարձակ գործող քաղաքացիների դաստիարակության լրջագույն խթան հանդիսանան: «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքի արդյունավետ ներդրումը պետք է մեծապես նպաստի դրան:

– **Օրինապաշտությունը և մարդակենտրոնությունը**. բանակում թե՛ ժամկետային, թե՛ պայմանագրային ծառայությունը, շարքայինի, ենթասպայի, թե՛ սպայի կարգավիճակում, պետք է քաղաքացու մեջ ձևավորեն օրենքի նկատմամբ խոր հարգանքի, դրանով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և, միևնույն ժամանակ, ուրիշների իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշները:

– **Առաջադիմությունը.** «զինվորական» և «բանակային» եզրույթները պետք է ինքնաբերաբար նշանակեն «առաջադեմ», «առավել ուսյալ», «նորարարական», «պատվախնդիր», «կազմակերպված»: Բանակի միջոցով հասարակությունը կարող է ստանալ առաջադիմության բազմաթիվ նոր ազդակներ: Ծառայությունը զինված ուժերում պետք է ամուր փոխշաղկապված լինի սոցիալական այնպիսի վերելակների հետ, որոնք թույլ կտան քաղաքացուն զգալի առավելություններ ստանալ ծառայությունը պատվով ավարտելուց հետո:

– **Նորարարականությունը.** արդիականացման ծրագրի նյութական մասի հիմքում ընկած են վաղվա պատերազմի տեխնոլոգիաներին, օր օրի առաջընթաց ապրող զինատեսակներին և ռազմական միջոցներին հակազդելու, դրանց հայրենական մշակման և արտադրության հնարավորություններն ընդլայնելու սկզբունքները:

– **Ներառականությունը.** հասարակությունը պետք է լինի այդ արդիականացման գաղափարի և արժեքների կրողն ու ակտիվ մասնակիցը**:** Դրա համար անհրաժեշտ է լինելու ձևավորել և ամրապնդել հասարակության վստահությունն ու հարգանքը զինված

ուժերի, դրանցում արդարության, արհեստավարժության և արդյունավետության նկատմամբ:

IV. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Նպատակ 1. Զսպման համակարգ

Այս համակարգը բաղկացած կլինի մարտավարական և օպերատիվ մակարդակներում՝ բարելավված մարտական հերթապահության, իսկ ռազմավարական մակարդակում՝ լայնածավալ ռազմական գործողությունների զսպման բաղադրիչներից: Համակարգը նպատակաուղղված կլինի Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված ոտնձգության կանխմանը, իսկ պատերազմի ժամանակ՝ ռազմական գործողությունների հնարավորինս վաղ փուլում դադարեցմանը՝ Հայաստանի Հանրապետության համար շահավետ պայմաններով: Հատկապես մեծ կարևորություն է տրվում Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի անվտանգության երաշխավորմանը:

Զսպման համակարգի ձևավորման առաջնահերթ մարտավարական խնդիրն է որակական նոր մակարդակի հասցնել մարտական հերթապահությունը՝ ուղղված.

– հակառակորդի հարձակման նախապատրաստման, դիվերսիոն գործողությունների կամ դրանց փորձի վաղ հայտնաբերմանը և հակազդմանը,

– պետական սահմանի խախտումների արդյունավետ կանխմանը,

– հակառակորդին անհրաժեշտության դեպքում անհամաչափ վնաս պատճառելուն,

– զորքերի՝ պլանային ձևով պահպանությունից պաշտպանության անցնելու ապահովմանը,

– առաջնագծում զինանձնակազմի կողմից դիտարկման կարողությունների ընդլայնմանն ու առավելագույնս անվտանգ մարտական հերթապահության կազմակերպմանը:

Այդ նպատակով նախատեսվում է կարճաժամկետ հեռանկարում այն համալրել արդիական տեսադիտարկման, հետախուզության, հավաստանշման և կրակային խոցման ու ինժեներական միջոցներով և որպես վերջնանպատակ՝ ձևավորել միասնական համակարգ: Մարտական հերթապահության համակարգի կատարելագործումը նպատակ է հետապնդում նաև բարձրացնել մարտական հերթապահությունում ընդգրկված անձնակազմի անվտանգության աստիճանը, ինչը ենթադրում է մարտական հենակետերի լրացուցիչ ինժեներական կահավորում և անձնակազմի համապատասխան հանդերձավորում:

Համակարգի օպերատիվ մակարդակում զինված ուժերը պետք է ապահովեն ռազմական փոփոխվող միջավայրին և գործողություններին ադապտացման բավարար մակարդակ: Այդ նպատակով զինված ուժերում նախատեսվում է ներդնել «քաղված դասերի» արդյունավետ համակարգ, ձևավորել ֆիզիկական, մտավոր, տեխնիկական և տեխնոլոգիական այնպիսի կարողություններ, որոնք թույլ կտան համարժեքորեն արձագանքել մարտական գործողությունների ծավալման անկանխատեսելի իրողություններին և սցենարներին, պատերազմի վարման նոր ձևերին և եղանակներին, ինչպես նաև ապահովել ռազմական գործողություններին դիմագրավման անհրաժեշտ տևականություն:

Համակարգի ռազմավարական բաղադրիչը ենթադրում է ձևավորել լայնածավալ ռազմական գործողությունները կոնվենցիոնալ միջոցներով զսպելու, ինչպես նաև անհամաչափ գործողություններ իրականացնելու ներուժ՝ «պատշաճ հեռահարությամբ» հարվածներ հասցնելու և անհրաժեշտության դեպքում մարտական գործողություններն ապակենտրոնացված ու տարատեղված կերպով հակառակորդի տարածք տեղափոխելու կարողությունների համակցմամբ:

Այդ նպատակով նախատեսվում է ավելացնել ՀՀ զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հեռավորությունը, ճշգրտությունը և արդյունավետությունը՝ գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածների, հրետանային խոցման և հակաօդային պաշտպանության կարողությունների, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ նաև բազմաֆունկցիոնալ օդուժի զարգացման միջոցով:

Միաժամանակ, ստեղծվելու է ռազմավարական հետախուզության նոր համակարգ՝ ռադիոէլեկտրոնային և օդային հետախուզության կարողությունների և տարբեր աղբյուրներից ստացվող հետախուզական տվյալների համադրման ենթակառուցվածքների զարգացման միջոցով:

Ձևավորվելու է նաև տեղեկատվական գործողությունների և կիբեռ ռեսուրսների կիրառման ժամանակակից համակարգ, որը կներառի հոգեբանական գործողություններ վարելու կարողություններ, կիրականացնի ռազմական խորամանկության և ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցառումներ և կունենա հակառակորդի տեղեկատվական միջոցների ֆիզիկական (կիբեռ) խոցման հնարավորություններ: Ներդրվելու է տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների գծով ղեկավարների ինստիտուտ:

Եվ վերջապես, զսպման համակարգի կարևորագույն բաղկացուցիչ է հանդիսանում ռազմաքաղաքական և դիվանագիտական մեթոդներով զսպումը, որը նախատեսում է ՀՀ արտաքին քաղաքական ջանքերի և հավաքական պաշտպանության գործուն մեխանիզմների համադրում: Այդ նպատակով նախատեսվում է զարգացնել դաշնակ-

ցային պարտավորությունների իրավապայմանագրային դաշտը, կատարելագործել համատեղ ուժերի և միջոցների մարտական կարողություններն ու կիրառման օպերատիվությունը: Զուգահեռաբար, քաղաքական փոխլրացնող ազդեցության լծակներ զարգացնելու նպատակով նախատեսվում է ակտիվացնել ռազմադիվանագիտական աշխատանքը միջազգային կազմակերպությունների և գործընկեր պետությունների հետ: Հարևան պետությունների հետ ռազմադիվանագիտական ջանքերը պետք է ուղղված լինեն նաև պատերազմական ժամանակաշրջանում տրանսպորտային ուղիների, կապի և հեռահաղորդակցության խափանումներ թույլ չտալուն:

Նպատակ 2. Արդյունավետ ռազմական կառավարման համակարգ և կատարելագործված մարտական վարպետություն

Նպատակին հասնելու համար կիրականացվի պետական ու ռազմական կառավարման համակարգերի ներդաշնակեցում՝ սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված հրամանատարական ուղղահայացում տեղի ունեցած փոփոխությունների համապատասխանեցում քաղաքական կառավարման պահանջներին՝ հիմքում ունենալով զորքերի կառավարման և ղեկավարման անընդհատությունը: Այս առումով բոլոր իրավիճակների համար պետք է ապահովել հրամանատարական ու շտաբային գործառույթների հավասարակշռումը, պլանավորման և գործողությունների համար պատասխանատու օղակների հստակ սահմանազատումը՝ դյուրացնելով «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքի ներքո միանձնյա ղեկավարումը և ջանքերի միասնականությունը:

Կառուցվածքային և գործառնական առումով պետության և զինված ուժերի կառավարման համակարգի կատարելագործումը պետք է ըստ անհրաժեշտության ապահովի զորքերի ապակենտրոնացումը և դրա համատեղումը կենտրոնացված կառավարման հետ, կառավարման մարմինների աշխատանքի օպերատիվության, կառավարման կետերի կենսունակության և շարժունակության բարձրացումը: Կառավարման համակարգի չորս հիմնական բնորոշիչները կլինեն՝ կառավարման ապակենտրոնացումը, կապի և կառավարման կետերի արագ վերականգնելիությունը և տարաբաշխումը, ինչպես նաև որոշումների կայացման պատվիրակումը:

Այդ նպատակով ներդրվելու է նոր միասնական ավտոմատացված կառավարման համակարգ՝ հասնելով թվայնացված կառավարման և «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» կառավարման սկզբունքի կենսագործման: «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքը նպատակաուղղված է ենթականերին նախաձեռնություն ցուցաբերելու և սեփական դատողությունը կիրառելու հարցում իրավազորելուն՝ հնարավոր

դարձնելով զորքերի կիրառման առավել ճկունությունն ու արագաշարժությունը: Այս սկզբունքի կիրարկումը պահանջում է ուժերի, այդ թվում՝ պլանավորման կարողությունների և միջոցների հնարավորինս պատվիրակում ներքևի օղակներին, հրամանատարների (պետերի) ու ենթակաների միջև փոխադարձ վստահություն և հրամանատարի (պետի) մտադրության ըմբռնում:

Մարտական վարպետության կատարելագործման տեսանկյունից կարևորվում է ռազմական գործողությունների վարման ձևերի ու եղանակների (ռազմարվեստի) արդիականացումը՝ ապակենտրոնացված ու տարատեղված գործողություններ վարելու կարողությունների ձևավորմամբ և օպերացիաների վարման պայմանների ու առանձնահատկությունների հաշվառմամբ՝ զինված ուժերի պատրաստությունը հավանական պատերազմի բնույթին համապատասխանեցնելու նպատակով: Այն իրականացվելու է օպերատիվ, զորահավաքային և մարտական պատրաստության և դրա գնահատման, մարտական հերթապահության մակարդակի բարձրացման միջոցով՝ համապատասխանաբար ապահովելով հակառակորդի նկատմամբ առաջանցում որոշումների կայացման և գործողությունների իրականացման ընթացքում:

Ռազմարվեստի արդիականացումը ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումներին թույլ կտա զբաղեցրած դիրքերի համառ պաշտպանությունը համատեղել իրականացվող զորաշարժային գործողությունների հետ, իրենց պատրաստվածությամբ, գործողությունների վճռականությամբ և կամքի պարտադրմամբ հասնել քանակական ցուցանիշներով գերազանցող հակառակորդին վարպետությամբ գերազանցող ստորաբաժանումների (ուժերի) կողմից խնդիրների առավել արդյունավետ կատարման:

Մարտական վարպետության կատարելագործման կարևորագույն բաղկացուցիչ է անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության և կարգապահության բարձրացումը: Այդ նպատակով պլանավորվում է մշակել բարոյահոգեբանական պատրաստության ծրագիր և գնահատման համակարգ, որը կներառի անհատական և ստորաբաժանումների կազմով այնպիսի ունակությունների ձևավորումը, որոնք կնպաստեն ժամանակակից մարտի պայմաններում տարբեր բարդությունների մարտական խնդիրների ինքնուրույն կատարմանը, այդ թվում՝ գլխավոր ուժերից անջատ, առաքելության գիտակցմամբ, նախաձեռնողականության ցուցաբերմամբ:

Մարտական վարպետության կատարելագործման նպատակով նախատեսվում է բարձրացնել նաև զինված ուժերում արհեստավարժ անձնակազմի մասնաբաժինը, զորակոչի՝ որպես համալրման հիմնական եղանակի պահպանմանը զուգահեռ սերժանտական հաստիքները, մարտական ապահովման ոլորտի և մարտական հերթապահութ-

յուն իրականացնող անձնակազմն աստիճանաբար առավելապես պայմանագրային զինծառայողներով համալրելու միջոցով:

Եվ վերջապես, նախատեսվում է ներդնել մարտական գործողությունների նմանակման, մոդելավորման ու խաղարկման արդիական վարժասարքեր, որոնք թույլ կտան զորավարժություններ և վարժանքներ իրականացնել ընդհուպ բանակային կորպուսների և ամբողջ զինված ուժերի կազմով:

Նպատակ 3. Արժանիքների և կրթական չափանիշների վրա հիմնված անձնակազմի կառավարման համակարգ

Կիրականացվի ռազմական կրթության, ուսուցման, վերապատրաստման համակարգի վերափոխում՝ ժամանակակից զինծառայողի կերպարի ձևավորմամբ՝ նպատակ ունենալով ապահովել մասնագիտական բարձր կարողություններով օժտված զինծառայողներով և հատկապես՝ սպայական ու ենթասպայական կազմով համալրումը: Այդ նպատակով պլանավորվում է ձևավորել բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության ծրագրերով ու դասընթացներով (ներառյալ՝ հեռավար) համընդգրկուն, ինքնաբավ և միջազգայնորեն մրցունակ ազգային ռազմակրթական կարողություններ՝ դասախոսական ու մեթոդական կազմերի վերապատրաստման, ուսումնանյութական բազայի ընդլայնման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման միջոցով: Մասնավորապես, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի հիմքի վրա կստեղծվի արդիական ենթակառուցվածքներով և ուսումնական ծրագրերով համալրված մեկ միասնական ռազմական համալսարան, իսկ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում կկազմակերպվի միջգերատեսչական ձևաչափով կրթություն:

Հանրակրթության ոլորտում պլանավորվում է վերանայել նախնական զինվորական պատրաստության առարկայի մեթոդաբանությունն ու ծրագրերը՝ ավագ դպրոցների աշակերտներին որակյալ զինվորական գիտելիքներ ուսուցանելու և զինվորական ծառայության գրավչությունը բարձրացնելու նպատակով:

Կընդլայնվեն նաև զինված ուժերում ենթասպայական (սերժանտական) կազմի պատրաստման կարողությունները, հանրակրթության ոլորտում կձևավորվի միջին մասնագիտական կրթություն պահանջող մասնագիտությունների ուղղությամբ պետական պատվեր:

Զուգահեռաբար նախատեսվում է ներդնել ռազմական կրթության և անձնակազմի առաջխաղացման (պաշտոնների նշանակում և կոչումների շնորհում) փոխկապակցված, էլեկտրոնային և թափանցիկ համակարգ, որը կընդգրկի գործող բանակն ու ակ-

տիվ պահեստազորը: Ներդրվող համակարգը նպատակ է հետապնդում օպտիմալացնել մարդկային ռեսուրսների կառավարումը՝ սահմանելով կրթական չափանիշների և մասնագիտական պատրաստվածության վրա հիմնված ծառայողական առաջխաղացման, հրամանատարական և շտաբային պաշտոններում ծառայության փոխարինման (ռոտացիա) և յուրաքանչյուր պաշտոնում ծառայության համակողմանի գնահատման թափանցիկ սկզբունքներ, որոնք զինված ուժերի պայմանագրային (պրոֆեսիոնալ) անձնակազմի համար անձնական արդյունավետության աճի շարժառիթավորման և սեփական կարիերայի կառավարման հնարավորություններ կստեղծեն:

Կարևոր ուղղություն է հանդիսանում ռազմավարական հետազոտությունների, ռազմական գիտության, զինված ուժերի արդյունավետ կառավարման և այլ բնագավառներում գիտահետազոտական աշխատանքների իրականացման և դրանց արդյունքները ռազմակրթական ոլորտ, զինված ուժերի պատրաստության ծրագրեր, առօրյա գործունեություն և մարտական գործողությունների վարման ձևեր ու եղանակներ ներբերելու կարողությունների ձևավորումը:

Եվ վերջապես, նախատեսվում է ստեղծել անձնակազմի ծառայողական շարժառիթավորման լրացուցիչ հնարավորություններ՝ անձնակազմին ընձեռելով քաղաքացիական կրթություն ստանալու, բուժապահովումից և բնակկենցաղային պայմաններից օգտվելու այլընտրանքային հնարավորություններ:

Նպատակ 4. Ռեսուրսների արդյունավետ և թափանցիկ կառավարում

Ձևավորվելու է որակական ցուցանիշների վրա հիմնված պաշտպանության ռազմավարական պլանավորման համակարգ, որը կներառի ռազմավարության ձևավորման, կարողությունների մշակման, պլանավորման, ծրագրային բյուջետավորման և վերջապես՝ գնումների և զինված ուժերի կարիքների համար ձեռքբերումների գործընթացները՝ համապատասխան ավտոմատ կառավարման համակարգերի և էլեկտրոնային ծրագրերի ներդրմամբ:

Տվյալ համակարգի հիմքում դրվելու է կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու և դրանք կառավարելու նպատակը, որի համար կմշակվեն նյութատեխնիկական ռեսուրսների կառավարման (պլանավորում, գնումներ, սպառում) վերահսկման և հաշվետվողականության թափանցիկ ընթացակարգեր: Այլ առավելությունների թվում այս համակարգը կերաշխավորի պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների զարգացումը, բաշխումը, կառավարման և բյուջետային որոշումների ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութատեխնիկական

առումով կայունությունը, մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը:

Ռեսուրսների արդյունավետ և թափանցիկ կառավարման տեսանկյունից կարևորվում է նաև զինված ուժերի գործունեությունն ապահովող որոշակի ծառայությունների օտարումը կամ համակցումը քաղաքացիականի հետ: Մասնավորապես, բժշկական ծառայությունները հոսպիտալային օղակում կինտեգրվեն քաղաքացիական բուժհաստատությունների հետ, թիկունքային, կոմունալ շահագործման և տրանսպորտային մի շարք ծառայություններ կօտարվեն կամ կկենտրոնացվեն, ինչը թույլ կտա բարձրացնել դրանց արդյունավետությունը, վերահսկելիության մակարդակը և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

Նպատակ 5. Կայացած ռազմարդյունաբերական համալիր

Որպես «Ազգ-բանակ» հայեցակարգի տնտեսական բաղադրիչ՝ ռազմարդյունաբերական համալիրի կայացման, տնտեսության թռիչքային առաջընթացի և զինված ուժերի համակողմանի արդիականացման ապահովման համար առանցքային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում պատերազմի էկոնոմիկայի զարգացումը, որի խնդիրը պետք է լինի պետության և զինված ուժերի ռազմատնտեսական կարիքների բավարարումը և պատերազմի վարման տնտեսական ապահովումը:

Տնտեսության ռազմարդյունաբերական ճյուղերի զարգացման, հայրենական գիտատեխնիկական արդի ձեռքբերումների կիրառման, դաշնակից ու գործընկեր պետությունների հետ սերտ համագործակցության միջոցով կիրականացվի զինված ուժերի տեխնիկական և տեխնոլոգիական վերազինումը ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և հատուկ միջոցներով: Դա արվելու է գիտահետազոտական և կիրառական գիտության զարգացման, ինչպես նաև գիտաարտադրական բազայի և սպառազինության ու ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության, շահագործման, նորոգման, արդիականացման և օգտահանման երկարաժամկետ պատվերների ձևավորման միջոցով: Առաջնահերթ ուշադրություն է դարձվելու թվայնացված կառավարման զարգացման, կապի ժամանակակից միջոցների, տարբեր նշանակության անօդաչու թռչող սարքերի և ճշգրիտ խոցման միջոցների, ՌԷՊ միջոցների, տեսադիտարկման սարքավորումների, ռոբոտացված և հեռակառավարվող զենքերի մշակման, զրահատեխնիկայի արդիականացման և պաշտպանվածության բարձրացման խնդիրներին:

Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել ոլորտում ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների

ստեղծման քաղաքականություն՝ հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և հանրային, մասնավոր ու միջազգային կոոպերացիայի սկզբունքով համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով: Կարևոր խնդիրներից է ռազմարդյունաբերական համալիրի կողմից երկակի և քաղաքացիական նշանակության ապրանքների արտադրական կարողությունների ստեղծումը:

Նախատեսվում է նաև զարգացնել համապատասխան գիտատեխնիկական հենք, որը կապահովի ՍՌՏ շահագործական ցուցանիշների բարելավումը և արդիականացումը, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ նաև սպառազինության ժամանակակից նմուշների ստեղծմանն ուղղված աշխատանքների կատարումը:

Եվ վերջապես, նախատեսվում է ամբողջացնել ազգային ռազմարդյունաբերական ինովացիոն համակարգի ձևավորումը՝ խթանելով գիտելիքահենք տեխնոլոգիաների մշակման ու արտադրատեսակների թողարկման ավանդական և նորաձեռնարկ կազմակերպությունների զարգացումը:

Նպատակ 6. Զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ և ակտիվ պահեստազոր

Ձևավորվելու է պարտադիր և պայմանագրային ծառայության փոխկապակցված համակարգ, որը կառաջարկի պարտադիր զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ և կապահովի պայմանագրային հիմունքներով զինված ուժերի համալրումը արհեստավարժ կադրերով: Դա կարվի «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը կարճաժամկետ հեռանկարում նախնական ծավալով, իսկ միջնաժամկետ հեռանկարում՝ ամբողջ ծավալով իրականացման միջոցով:

Զուգահեռաբար նախատեսվում է զինվորական ծառայության մեջ կամավորության սկզբունքի հիման վրա կին զինծառայողների ներգրավումն աստիճանաբար ավելացնել՝ սկզբում նյութատեխնիկական ապահովման, այնուհետև՝ մյուս ոլորտներում:

Կներդրվի ակտիվ պահեստազորային ծառայություն, որի համար կձևավորվեն նորմատիվ իրավական բազա և պահեստազորի հաշվառման էլեկտրոնային համակարգ: Ակտիվ պահեստազորային ծառայության ներդրումը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել պահեստազորի մասնագիտական ներուժը՝ պարբերական վարժանքների և զինված ուժերի խնդիրների կատարմանը նպատակային ներգրավման միջոցով:

Նպատակ 7. Սոցիալապես ապահովված զինվորական ծառայություն

Կիրականացվեն ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների ու քաղ-ծառայողների, զինվորական հաշմանդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների համընդգրկուն սոցիալական ապահովման ծրագրեր՝ ընձեռելով կենսաթոշակային (ներառյալ՝ կուտակային), բժշկական ապահովման և քաղաքացիական մասնագիտություններով վերապատրաստման հնարավորություններից օգտվելու, ինչպես նաև բնակարանային և բարելավված դրամական ապահովումներից օգտվելու այլընտրանքային հնարավորություններ:

Կվերափոխվի զինծառայողների բժշկական ապահովման համակարգը՝ առաջին բուժօգնության ցուցաբերումից և մարտի դաշտից տարհանումից մինչև հոսպիտալային օղակում որակյալ բուժում ստանալու համար նոր ընթացակարգերի և տեխնիկական միջոցների ներդրմամբ:

Զուգահեռաբար, նախատեսվում է ամբողջացնել որակապես նոր մակարդակով բուժծառայություններ մատուցող ռազմաքաղաքացիական ինտեգրված բժշկական ենթակառուցվածքների ու կարողությունների ստեղծումը, որը ենթադրում է ռազմաքաղաքացիական ինտեգրված նոր բուժհաստատության շինարարություն:

ՀՀ սահմանամերձ համայնքներում կիրականացվեն անվտանգային և սոցիալ-տնտեսական ծրագրեր՝ ուղղված բնակչության անվտանգության ապահովմանը, քաղաքացիական պաշտպանության ոլորտում իրազեկվածության և վարժվածության բարձրացմանը, ինչպես նաև սոցիալական վիճակի բարելավմանը:

Նպատակ 8. Բանակ-հասարակություն փոխվստահելի հարաբերություններ

Կիրականացվեն հանրային իրազեկման, ժողովրդավարական վերահսկողության և հասարակական վստահության, արդարության ու թափանցիկության մթնոլորտի ամրապնդմանն ուղղված ծրագրեր՝ անձնակազմի վերապատրաստման, իրազեկվածության բարձրացման կարողությունների ընդլայնման, դիմումների, բողոքների և առաջարկությունների ընթացքավորման կարողությունների ձևավորման միջոցով:

Զինված ուժերում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովումը երաշխավորելու նպատակով կիրականացվեն ծառայողական քննությունների գործընթացի պարզեցման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին իրազեկվածության բարձրացման, բողոք ներկայացնող անձանց հետագա հետապնդումներից պաշտպանվածության մեխանիզմների ներդրման, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների համար պաշտպանության և իրավական օգնության լրացուցիչ երաշխիքների ապահովման միջոցառումներ:

Զինված ուժերում բարեվարքության ամրապնդման նպատակով իրականացվելու են հակակոռուպցիոն ծրագրերի մշակման, իրավական և ընթացակարգային ներքին հակասությունների վերացման, հաշվետվողականության գործընթացների ներդրման, ինչպես նաև ներքին գործունեությունն ապահովող ընթացակարգերի պարզեցման և թափանցիկության ապահովման միջոցառումներ:

Նպատակ 9. Համակողմանի միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցությունը կնպատակաուղղվի բազմակողմ և երկկողմ հարթությունում ռազմաքաղաքական հարաբերությունների, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ու փոխգործունակության ամրապնդման բաղադրիչների զարգացմանը:

Ռազմաքաղաքական հարաբերությունների իրականացման բաղադրիչը կներառի անվտանգության միջազգային երաշխիքների ձևավորման, հավաքական պաշտպանության ռազմաքաղաքական և ռազմական մեխանիզմների կատարելագործման, միջազգային, տարածաշրջանային նշանակության և փոխադարձ կարևորվող հիմնախնդիրների շուրջ ռազմաքաղաքական խորհրդակցությունների անցկացման, միջազգային խաղաղության և կայունության շուրջ հանձնառությունների կատարման, ինչպես նաև սպառազինությունների վերահսկման ուղղությամբ գործունեության իրականացման հանգուցային հարթությունները: Այս ոլորտում ՀՀ նպատակներն են հանդիսանալու տարածաշրջանում անվտանգության երաշխիքների ձևավորումը, խաղաղության ու կայունության հաստատումը, ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման համար անհրաժեշտ քաղաքական և ռազմական պայմանների ստեղծումը:

Ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ու փոխգործունակության բաղադրիչներում հիմնական շեշտը դրվելու է. **ՀՀ դաշնակիցների հետ**՝ փոխադարձ ռազմաքաղաքական պարտավորությունների իրավական և կիրառական հիմքերի ամրապնդման, ՀՀ զինված ուժերը արդիական սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրման, միացյալ խմբավորումների և հավաքական (համատեղ) ուժերի և համակարգերի պատրաստության, արդիականացման ու վերազինման, ռազմական արդյունաբերության զարգացման, ՀՀ զինված ուժերի անձնակազմի հիմնական և ակադեմիական կրթության վրա, **իսկ գործընկերների հետ**՝ զինված ուժերի ոլորտային զարգացման գործում միջազգային առաջավոր փորձի ներդրման, կրթական ու նյութատեխնիկական ապահովման, ինչպես նաև փոխգործունակ կարողությունների ձևավորման, միջազգային ինտեգրման և միջազգային հանձնառությունների կատարման վրա:

Արդիականացման ծրագրով նախատեսված համալիր ջանքերի շնորհիվ կապահովվի զինված ուժերի վստահ մուտքը կայացման չորրորդ տասնամյակ՝ որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության գլխավոր երաշխիք:

Այդ երաշխիքը ծառայելու է որպես հավանական հակառակորդներին զսպող գործոն, «Ազգ-բանակ» հայեցակարգի իրագործման հուսալի աղբյուր և միջազգային արդյունավետ գործընկերության ծավալման հարթակ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ